զատիճանս քարամբք առանց չաղախի, ՌՌԵ (1741)։

Ի տաճարին Ս. Յարութեան մինչդեռ աւել ածէր Աբրահամ վարդապետ Ապտուլլահեան 'ի բաժնին Հայոց, 'ի ներքոյ մեծի կամարին մերձ 'ի Պատանատեղն, հասին 'ի վերայ նորա երեք անձինք 'ի կրօնաւորացն Լատինաց, և սկսան հարկանել զնա բրօք չարաչար, և մին 'ի հարուածոց անտի պատահեալ 'ի գլուխ նորին՝ ճեղքեցաւ, և սկսաւ հոսել արիւն հորդ՝ և ինքն անկաւ անդ իբր ըզմեռեալ։ Լատին կրօնաւորք ոչ շատացան այնու, այլ 'ի կատաղութենէ իւրեանց, զոր ինչ միանգամ գտին անդ 'ի սպասուց և 'ի կարասեաց՝ հարեալ զգեանի խորտակեցին՝ ընդ որս և զգրքակալն մեծ եւ զպղնձի չրջանակն Ուժաթափման տեղւոյն Ս. Աստուածածնի։ Իբրեւ ազդեցեալ Գրիգորի Պատրիարքի որ ինչ միանգամ գործեցին Լատինք 'ի տաճարի անդ՝ արտմեցաւ յոյժ, այլ զի մի' առաւել գրգռեսցին Լատինք 'ի յանդգնութիւն, առաքեաց զՊարրիկէ վարդապետ և զԹարգմանն Պօղոս առ դատաւորն, ընդ որս էր և Թարգմանն Ցունաց. յանդիման լեալ սոցա յատենի սկսան ամբաստան լինել զկրօնաւորացն Լատինաց և ասեն. տակաւին 'ի սմին ամի ընթերցաւ Կայսերական հրովարտակն 'ի լուր ամենեցուն, չհակառակիլ Լատինաց ընդ կրօնաւորս Հայոց, չնեղել և չբռնանալ 'ի վերայ իրաւանց նոցա։ Եւ զի՝ սովորութիւն է քրիստոնէից մաքրել և աւել ածել զիւրաքանչիւր սեփհական տեղիս 'ի սահմանեալ աւուրս 'ի տաճարի անդ, և 'ի սմին աւուր 'ի մաքրել զտեղիս մեր, գործեցին Լատինք զայսպիսի ոճիրս. և արդ խնդրեմք քննել զխնդիրն և դատ առնել ընդ մեզ եւ ընդ Լատինս։ Իսկ դատաւորն առաքեաց զոմանս յերեւելի այլազգեաց 'ի Ս. Յարութիւն ստուգել զեղեալսն, և նոքա եկեալ տեսին զտեղին. զԱբրահամ վարդապետ վիրաւոր, զպղնձի չրջանակն հանեալ 'ի տեղւոջէն և խորտակեալ, և զայլ զնասն. և դարձեալ անտի պատմեցին դատաւորին։ Եւ կոչեաց առաջի իւր զկրօնաւորս Լատինաց, եւ եհարց ցնոսա. թէ ընդէ՞ր արարիք զայդ և հեղիք զարիւն առն անմեղի. և նոքա թագուցին զիրան եւ ուրացան առաջի դատաւորին, թէ ոչ երբէք ամբարձեալ է նոցա ձեռս 'ի վերայ ուրուք. այլ միայն կամե-